

## **Հայաստանի հանրապետության մշակութային քաղաքականությունը և հայկական մշակութային ժառանգությունը արտասահմանում**

Մարդկությունն այսօր կանգնած է նոր նպատակների ու մարտահրավերների առջև, ինչպես նաև՝ դեպի քաղաքակրթության նոր դարաշրջան անցումային փուլում, հետևաբար մշակութային բազմազանության պահպանության, մշակույթի զարգացման ու շարունակականության հարցը ձեռք է բերել առավել արդիական նշանակություն: Հասարակության կայուն զարգացումն այսօր ուղղակիորեն կապված է մշակույթի հետ: Եթե նախկինում կայուն զարգացում ասելով հասկացվում էր միայն բնապահպանական ոլորտը, ապա ներկայում այն բաղկացած է նաև սոցիալ-տնտեսական, սոցիալ-հումանիտար բաղադրիչներից, որոնց մեջ կարևոր դեր է հատկացված հասարակության մշակութային կրթվածության մակարդակի բարձրացման խնդրին: Այժմեական է «մշակույթ» հասկացության նկատմամբ նոր մոտեցումներ ձևավորելու, նրա ժամանակակից դերի վերագնահատման և վերարժևորման անհրաժեշտությունը:

Հայաստանը համաշխարհային գործընթացների մասնակիցն է, ինչի մասին են վկայում բազմաթիվ միջազգային փաստաթղթերին և կոնվենցիաներին մասնակցությունն ու դրանց կիրարկմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Անկախության առաջին տասնամյակում երկրի մշակութային քաղաքականությունը, ելնելով սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական անբարենպաստ իրավիճակից, հիմնականում նպատակ է հետապնդել առաջին հերթին պահպանել գործող մշակութային կազմակերպություններն ու ենթակառուցվածքը, և ցավոք ավելի պակաս ուշադրություն է դարձվել դրանց զարգացմանը: Դրանից ելնելով էլ այս ժամանակաշրջանում մշակութային քաղաքականությունը չի համապատասխանեցվել տնտեսության աճի պահանջներին, չի ձևավորվել մշակույթի կառավարման մոդել, չի պահպանվել շուկայական մեխանիզմների և պետական երաշխիքների հավասարակշռությունը: Ավանդական մշակույթի շատ ձևերի շարունակականությունն ընթացել է ինքնակարգավորման ուղիով:

Սակայն վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում մշակույթի՝ որպես կայուն զարգացման ռեսուրսի գնահատման և արժևորման ուղղությամբ զգալի քայլեր են կատարվում: Մասնավորապես ուսումնասիրվում է նրա դերն ազգային ինքնության, քաղաքացիական հասարակության և երկրում սոցիալական կապիտալի ձևավորման, խաղաղության, պահպանության գործում: Պետական մշակութային քաղաքականությունն իրականացվում է ազգային ավանդական

արժեհամակարգի, մշակութային միջավայրի, ժառանգված տարածքի բնության, պատմամշակութային արժեքների պահպանման սկզբունքներին համապատասխան: Ներդրված մեխանիզմները հնարավորություն են տալիս ապահովելու կայուն զարգացման գաղափարախոսության հետ ազգային մշակութային առաջնայնությունների արդյունավետ զուգակցումը:

Նախորդ տարիների ընթացքում մշակույթի ոլորտում պետության կողմից իրականացվել են մշակութային նյութական և ոչ նյութական արժեքների պահպանմանը, ոլորտի կադրերի որակի և նրանց սոցիալական վիճակի բարելավմանը, մշակութային ժառանգության մատչելիության ապահովմանը նպատակաուղղված բազմաթիվ միջոցառումներ: Շարունակաբար իրականացվում են մշակութային կազմակերպությունների շենքերի վերանորոգման և նյութատեխնիկական բազայի ապահովման աշխատանքներ: Մշակվել և հաստատվել է «Գեղարվեստական կրթության հայեցակարգը», համաձայն որի՝ սոցիալապես անապահով խավերի երեխաների համար երաժշտական և արվեստի դպրոցներում ներդրվել է պետապատվերի համակարգը՝ ազգային նվագարանների, լարային և փողային գործիքների համար: Մշակութային կրթության մատչելիության ապահովման նպատակով ՀՀ մարզերում հիմնադրվել են 33 հենակետային դպրոցներ՝ մեթոդական կենտրոններով, ինչը հնարավորություն է ընձեռում ստանալու նաև խորացված մասնագիտական գեղարվեստական կրթություն, ապահովվել է որակ և տարածքային մատչելիություն:

Մարզերի մշակութային կյանքի աշխուժացման, ինչպես նաև մշակութային կազմակերպություններին և մշակութային միջոցառումներին հաղորդակցման մատչելիության ապահովման նպատակով՝ ՀՀ մշակույթի նախարարությունը վերջին տարում որդեգրել է դեպի մարզեր թատերահամերգային կազմակերպությունների հյուրախաղային, թանգարանային հավաքածուների շրջիկ ցուցադրությունների կազմակերպման ակտիվացման քաղաքականություն՝ «Մշակութային կանգառ» խորագրով: ՀՀ մշակույթի նախարարության և «Փյունիկ» մարդկային ռեսուրսների զարգացման հիմնադրամի միջև ստորագրված համագործակցության հուշագրի շրջանակներում 2017 թվականին Հայաստանում և Արցախում իրականացվում են շուրջ 426 մշակութային միջոցառումներ՝ համերգներ, ներկայացումներ, ցուցահանդեսներ, փառատոներ: Վերոնշյալ հիմնադրամի կողմից նախարարությանը տրամադրել է նաև 2 շարժական կինոթատրոն, որոնց միջոցով տարբեր վայրերում կազմակերպվում են կինոդիտումներ:

✓ Ժամանակակից արվեստի բնագավառում նախարարության քաղաքականության կարևոր քայլերից մեկն է նաև ոլորտի իրավապայմանագրային դաշտի կարգավորման գործընթացի կազմակերպումը: Ներկայում մշակվել և շահագրգիռ կազմակերպությունների ու ստեղծագործական շրջանակների հետ քննարկվում է «Կինեմատոգրաֆիայի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը մինչև 2017 թվականի նոյեմբերի երրորդ տասնօրյակ կներկայացվի ՀՀ կառավարություն:

✓ Մշակույթի ոլորտի իրավապայմանագրային դաշտ

Արդեն իսկ ՀՀ ազգային ժողովի քննարկմանն է ներկայացված «Թանգարանների և ՀՀ թանգարանային ֆոնդի մասին» օրենքի նախագիծը, որի ընդունումը կկարգավորի թանգարանների ստեղծման, գործունեության, գործունեության դադարեցման և հավատարմագրման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև կտա հստակ սահմանումներ թանգարանների տեսակներին, գործառույթներին, կապահովի Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի ձևավորման, համալրման, հաշվառման, պահպանության և անվտանգության օրենսդրական հիմքերը:

Ներկայում շահագրգիռ կազմակերպությունների հետ քննարկվում է «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում նոր խմբագրումը, որը ևս մինչև ս.թ. նոյեմբերի երրորդ տասնօրյակ կներկայացվի կառավարություն: Նախատեսվում է սահմանել պատմամշակութային անշարժ ժառանգության պահպանությանը և օգտագործմանը վերաբերող հասկացությունները, հստակեցնել ու վերապահել նոր լիազորություններ ՀՀ կառավարությանը, լիազոր մարմին և տեղական ինքնակառավարման մարմիններին: Նախագծով կհստակեցվի և կկանոնակարգվի հնագիտական հետազոտությունների ու պեղումների ողջ ընթացքը: Կսահմանվեն նոր հայտնաբերված հուշարձաններին կարգավիճակ շնորհելու, պետական ցուցակներում ընդգրկելու և ցուցակից հանելու վերաբերյալ չափորոշիչները, վնասի չափի գնահատման մեխանիզմները:

Ընդհանուր առմամբ մշակութային ժառանգության պահպանության ոլորտում իրականացվող ծրագրերի հիմնական նպատակը պատմամշակութային անշարժ հուշարձանների, թանգարանների և գրադարանների պահպանումն ու բարեկարգումն է, ինչը ոչ միայն նպաստում է ՀՀ մշակութային ժառանգության փոխանցմանը ապագա սերունդներին, այլև՝ զբոսաշրջության զարգացմանը:

Այսօր համաշխարհային մշակութային բազմազանության մեջ հայկական մշակութային ժառանգության ներգրավվածության մեծացման, հասարակության մեջ մշակութային ժառանգության վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման, մշակութային արժեքներին հաղորդակցվելու մատչելիության ապահովման գործընթացների կազմակերպումը ենթադրում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում և շարունակական զարգացում:

2017 թվականի հունվարից սկսվել են միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի ստեղծման և ներդրման հետ կապված գործընթացները: Մշակվել, սահմանված կարգով շրջանառվել և ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «ՀՀ պետական և տարածքային կառավարման մարմինների ենթակայությամբ գործող թատերահամերգային, թանգարանային, սպորտային կազմակերպությունների և ժամանցային կենտրոնների էլեկտրոնային տոմսերի

տեղեկատվական-հաշվարկային միասնական ավտոմատացված համակարգի ստեղծման, ներդրման և սպասարկման ծառայությունների կազմակերպման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Համակարգը կներդրվի 3 փուլով՝ մինչև նոյեմբերի 30-ը կգործի Երևանի 10 խոշոր կազմակերպությունում:

Ներկա տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն առավել լայն հնարավորություններ է ստեղծել մշակութային ժառանգության հանրահոշակման համար, և այդ իսկ նպատակով ՀՀ մշակույթի նախարարությունը նախաձեռնել է մշակութային արժեքների թվայնացման գործընթաց: Մշակութային արժեքները թե՛ հասարակության լայն զանգվածներին, և թե՛ դրանք ուսումնասիրող գիտնական-հետազոտողներին առավել հասանելի և մատչելի դարձնելու գործում չափազանց կարևոր է տարբեր թանգարաններում գտնվող հավաքածուների վերաբերյալ տեղեկույթը միասնական համակարգով ներկայացնելը: Միասնական սկզբունքով և ձևաչափով համակարգված շտեմարանն, անկասկած, կնպաստի արժեքների պահպանական խնդիրների առավել հեշտ լուծմանը և հնարավորություն կընձեռի կանխելու թանգարաններից կորած, գողացված մշակութային արժեքների ապօրինի արտահանումն ու դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը:

Պատմական ճակատագրի բերումով հայկական մշակութային շարժական արժեքներ առկա են նաև աշխարհի տարբեր մշակութային կառույցներում, ինչպես նաև հայ համայնքների հասարակական, մշակութային ու հոգևոր-կրոնական բազմաթիվ հաստատություններում և անհատների մոտ: Հետևաբար մեր օրերում խիստ կարևոր է ոչ միայն մեր մշակույթի պահպանումն ու զարգացումը, այլև համապատասխան մակարդակով թե՛ արտերկրում, և թե՛ Հայաստանի Հանրապետությունում գտնվող մշակութային արժեքների համախմբումն ու հանրահոշակումը՝ իբրև պայքարի գենք հայոց լինելության ու հայկականի հարատևման դեմ ուղղված յուրաքանչյուր ոտնձգության, դրա յուրացումն ու նենգափոխումը կանխարգելելու միջոց:

Թանգարաններում առկա մշակութային արժեքների և հավաքածուների հանրահոշակմանն է նպաստում նաև թանգարանների վիրտուալ տուրերի ծրագիրը: Համագործակցելով [www.360yerevan.am](http://www.360yerevan.am) կայքի հետ՝ Հայաստանի մի քանի թանգարաններում մշակվել և ներդրվել է թանգարանների վիրտուալ տուրերի ծրագիրը: Գործընթացը շարունակական է և նախատեսվում է ծրագրում ընդգրկել բոլոր թանգարանները, այդ թվում՝ արգելոց-թանգարանները:

Թանգարանային ոլորտի զարգացման նպատակով 2017թ-ից մեկնարկել է «Աուդիոգրիք բջջային հավելվածի»՝ Հայաստանի 7 թանգարանների հավաքածուների մասին պատմող՝ IOS և Android օպերացիոն համակարգերի հիման վրա աշխատող աուդիոգրիքի ծրագրային հավելվածների ստեղծման աշխատանքները, որն իրականացվել է ՀՀ-ում Չինաստանի դեսպանության հետ համատեղ ֆինանսավորմամբ: Հավելվածում կընդգրկվեն նաև թանգարաններում անցկացվող միջոցառումների և դրանց տոմսերի վաճառքի վերաբերյալ տեղեկատվությունը:

ՀՀ մշակույթի նախարարության գործունեության ընդհանուր նպատակը միտված է մշակութային ժառանգության պահպանմանը, համալրմանը, հանրահռչակմանը և ժամանակակից արվեստի զարգացմանը:

✓ Գերակայություններ

Թվարկված նպատակների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նախարարությունը մշակում և իրականացնում է մշակույթի տարբեր ուղղություններին համապատասխան մշակութային քաղաքականություն, սահմանում այդ ուղղությունների առաջնահերթությունները, վեր հանում խնդիրներն ու կազմակերպում դրանց լուծմանն ուղղված գործընթացներ, միջոցներ է ձեռնարկում մշակույթի արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրման համար:

2017 թվականի մշակութային քաղաքականության գերակայություններն են՝

- Մշակութային արտադրանքի և ծառայությունների խթանումը՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ
- Հանրության շրջանում հայրենասիրական ոգու բարձրացմանն ուղղված ստեղծագործական ծրագրերի իրականացումը
- Ոլորտում տնտեսական բաղադրիչի մեծացումը:

ՀՀ մշակույթի նախարարությունը մշակութային քաղաքականությունն իրականացնում է իր ենթակայությամբ գործող ավելի քան 72 կազմակերպությունների միջոցով:

Ամփոփելով նշեմ, որ ներդրված մեխանիզմների շնորհիվ միայն 2017 թվականի առաջին կիսամյակում արձանագրվել է մշակույթի բնագավառում տնտեսական բաղադրիչի աճ: